

նունն լցեալ, զի կարգեաց զաստուուն եւ զպրատուն, սաղմոսերգութիւն եւ սեղանատեղ, ի նմանութիւն սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Եւ եկաց տարի մի յԱթոռն եւ յետ տարւոյն եհաս աստուածասաստ բարկութիւն. զի եկեալ թագաւորն Շահ Ապաս՝ զամենեսեան գերեաց եւ տաբաւ ի Սպահան. եւ կաթողիկոսն գնաց ի մայրաքաղաքն Համիթ եւ անդ հաստատեաց (զպրատուն), յետ որոյ հանգեաւ ի Քրիստոս երանելին. եթող զմեզ որբ ի մէջ սգոյ⁹:

Մեղքիսեզի միտքը անկեղծ չէր: Երբ Շահ Աբաս 1604ին առաւ Երեւանը, ներկայացաւ Մեղքիսեղեկ շահին եւ մատնեց «զանպարտ անմեղն, թէ մէկ չուն Հոռոմցի մի թուրքին ուժովն եկն, զիմ աթոռն յախշտակեց»: Սրապիոն-Գրիգոր Կաթողիկոս ի Զուղայ կը կալանաւորուի եւ կ'ուղարկուի Սպահան. ուր «ջուղայեցի խոճաներն զանձներ ի մահ կու զնեն, կու հասկցնեն Շահին զորպէս բերելն եւ բաղում աղաչանօք եւ մեծաւ տաժանմամբ հազիւ իջուցանել կու տան ի կախաղանէն եւ վեց հազար զուրուշ (300 թուման) տուժինք կու տան եւ կու զերծուցանեն ի ձեռանէ Շահին» (Դարանաղցի, 58): Սրապիոն հրաժարելով Աթոռէն կը վերադառնայ Ամիթ (1605):

1604 Դեկտեմբերին երբ Արարատեան դաշտին քրիստոնեաները կը տեղահանուէին

⁹ Սմբատեանց՝ Երնջակ, էջ 184: